

Ժողովուրդ

92
(2942)

9 հուլիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՈՑ ԵՆ ԳԱՐՁՐԵԼ ՄԵՓԱԿԱՆ ԸՆԴԵՐԻ ՀԱՄԱՐ



Իշխանության ներկայացուցիչները, որոնք մերժում էին խնամի-ծանոթ-բարեկամ թեզը, տարեցտարի ավելի են արմատավորվում դրա մեջ՝ առավել սուսկալի դրսևորումներով:

Այս անգամ շարքը համալրում է ՀՀ առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանը: «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան, որ Լենա Նանուշյանը, օգտվելով իրեն ընձեռնված հնարավորություններից, որդու առողջական վիճակի վերաբերյալ այնպիսի փաստաթղթեր է հավաքել, որոնցով կարողացել է նրան ազատել զինծառայությունից:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձել էր առողջապահության նախարարի մամուլի քարտուղար Մարիամ Ծատրյանից ճշտել ունեցած տեղեկությունները. ստացանք հետևյալ պատասխանը.

«Ես վստահ եմ՝ գիտեք «բժշկական գաղտնիքի մասին» սահմանումը, օրենքի կետը: Ես իրավահարգ եմ: Այս հարցը նախարարի կամ նախարարության գործառնության հարց չէ, չեմ կարող մեկնաբանել. ունի առողջական խնդիր կամ չունի՝ համարվում է բժշկական գաղտնիք»:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց նաև ՀՀ պաշտպանության նախարարություն՝ հստակ հարցերով, թե որոնք են փոխնախարար Նանուշյանի որդու՝ Սերգեյ Մխիթարյանի՝ զինվորական ծառայության չանցնելու հիմնական պատճառները, եւ պահանջել էինք տալ հստակ հիմնավորում՝ զինծառայությունից ազատվելու վերաբերյալ:


ՀՀ պաշտպանության նախարարությունը մերժեց պատասխան պահանջող մեր հարցումը՝ պատասխանները դարձյալ հիմնավորելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջների հղմամբ:

Ստացվում է, որ իշխանությունը ներկայիս պաշտոնյաների համար հնարավորություն է՝ սեփական երեխաների շահերն առաջ տանելու. իսկ երբ Նիկոլ Փաշինյանի իշխանության եկավ, որը կոկորդոլ պայքարում էր Սյունիքի նախկին մարզպետ Սուրեն Խաչատրյանի եւ Էլի մյուս պաշտոնյաների որդիների՝ բանակում չծառայելու մերժելի երեւույթի դեմ, ու այդ ընթացքում որեւէ պաշտոնյա չէր խոսում անձնական տվյալների պաշտպանությունից:

Այսօր ԲԴԻ-ում կայանալու է դատավոր Աննա Դանիբեկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նիստը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ԲԴԻ-ում տրամադրվածությունն այնպիսին է, որ դատավոր Աննա Դանիբեկյանի լիազորությունները դադարեցվեն, իսկ թե ինչպես կքվեարկեն ԲԴԻ անդամները, ցույց կտան զարգացումները: Հիշեցնենք, որ մայիսի 14-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի դեմ հարուցված կարգապահական վարույթը ուղարկվել է ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ, իսկ առիթն այն է, որ մարտի 1-ից, ՀՀ արդարադատության նախարարը ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Զոհրաբյանի դեմ հարուցված քրեական գործը քննող, Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցել: Արդյունքում՝ կարգապահական վարույթը հասավ ԲԴԻ, ու այնտեղ էլ այս օրերին որոշվում է դատավորի ճակատագիրը: Մտում է սպասել, թե դատավորների անկախությունը ապահովելուն կոչված ԲԴԻ-ն ի՞նչ վարքագիծ կդրսևորի. կպատժի՞ դատավորին, թե՛ կների՞ Զոհրաբյանի գործով ինչ-ինչ որոշումների համար:




«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իշխանությունները ամենակոռուպցիոն ոլորտներից մեկի՝ պետական գնումների գործընթացի նկատմամբ հանրային հսկողություն իրականացնելու նպատակով՝ հարյուրավոր ՀԿ-ներից եւ ՋԼՄ-ներից ընտրել են մեկ ՀԿ: Մեր տեղեկություններով՝ նրանց է միացել նաև Դանիել Իոաննիսյանի՝ «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ն՝ ընդհանուր ութ անձով: Հիրավի, կնախանձեին ԶԳ-ին բոլշելիկները նման միատարր կառավարման համակարգ ձեւավորելու հարցում, ում օրոք գոնե ֆորմալ առումով գոյություն ունեին *Народный контроль* կամ *ОБХСС* կառույցները: Հ.Գ. Նախօրեին «Ժողովուրդ» օրաթերթի հրապարակած՝ «Հաշվեքնիչ պալատի բնորոշմամբ 67 միլիարդ դրամի, 362 մրցույթի ոչ թափանցիկ ծախսումների» փաստի առկայությամբ իշխանությունները առ այսօր, զբաղված լինելով հեծանիվ քշելով, ոչինչ չեն մեկնաբանում: Մեզ հետ զրույցում Դանիել Իոաննիսյանը հաստատեց, որ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն միացել է պետական գնումների գործընթացի վերահսկմանը. «Պետական գնումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը հենց մեր առաջարկությամբ է կառավարությունն ընդունել, մենք ենք առաջարկել, որ հավատարմագրում իրականացվի: Դիմումը երկու շաբաթ առաջ ենք ուղարկել, որպեսզի մենք ես միանաք պետական գնումների գործընթացի վերահսկողությանը: Մեր կողմից առաջարկված կարգի համաձայն՝ ցանկացած լրատվամիջոց եւ հասարակական կազմակերպություն կարող է հավատարմագրվել ֆինանսների նախարարությունում եւ գնումների ոլորտում, բոլոր հանձնում եւ ընդունումների նկատմամբ վերահսկողության իրավունք ստանալ, պետական միջոցներով կառուցվող շինությունների շինհրապարակ այցելել:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԲԳ-ական պատգամավորները չեն դադարում զարմացնել իրենց մտքի թռիչքով: Ամեն ինչ մեր երկրում իր բնական հունով ընթանում է, ամեն բան կարգին է՝ հիմա էլ ԲԳ-ականները որոշել են հեշտացնել հղիության վաղաժամ ընդհատումը եւ ՀՀ-ում թույլատրել սեռաբջիկ նվիրատվությունը: Աղմկահարույց՝ «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրինագծի հեղինակներն են ԲԳ-ական պատգամավորներ Նարեկ Զեյնալյանը, Լուսինե Բաղայանը, Տաթևիկ Գասպարյանը եւ Լենա Նազարյանը: Այսպիսով՝ գործող օրենքով՝ միայն հիվանդանոցային պայմաններում եւ գործիքային մեթոդներով են թույլատրում հղիության արհեստական ընդհատում, սակայն ԲԳ-ականներն առաջարկում են ավելի հասանելի դարձնել այս գործընթացը, եւ մինչեւ 8 շաբաթական հղիության դեպքում թույլատրել դեղորայքային արհեստական ընդհատում՝ գինեկոլոգիական լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպություններում, ինչպես ամբուլատոր, այնպես էլ հիվանդանոցային պայմաններում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության ցուցումով՝ նախատեսվում է մինչեւ 12 շաբաթական հղիության արհեստական ընդհատում. Հայաստանում որոշել են շեմը իջեցնել: ԲԳ-ականներն առաջարկում են նաև ՀՀ-ում թույլատրել սեռաբջիկ նվիրատվությունը, արտահանումը եւ ներմուծումը:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՂՐՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻՆ»

ArmLur.am-ը սիրող ֆաղական իրավիճակի եւ «Տավուրը հանուն հայրենիքի» շարժման մասին գրուցել է բանաստեղծ Խաչիկ Մանուկյանի հետ:

-Պարոն Մանուկյան, օրերս Դուք Գերմանիայում էիք եւ հրապարակում էիք կատարել, որ գերմանուհին դարձավ սրբազան պայքարի մի մասնակից: Խնդրում ենք՝ մի փոքր մանրամասնեք այդ մասին:

-Սա մի հետաքրքիր պատմություն էր. մենք գնացինք Ամբախ ամրոց, եւ այդ արդիկը նկարագրում էր ամրոցի հետ կապված պատմությունը, գարմանալի մի բան իմացանք, որ այդ կառույցում ֆրանսիացիները գերեզարդել են ժողովրդին: Պատմվեց, որ ամրոցում 1832 թվականին պայքար է կազմակերպվել եպիսկոպոսների կողմից, եւ դա հիմք է դրել Գերմանական Ռեմոկրատական Հանրապետության, որն ավելի ուշ Վայմարի հանրապետությամբ հռչակվեց: Ես ասացի. «Գիտե՞ք՝ հիմա էլ մեզ մոտ է սրբազան պայքար ընթանում, մեր շարժումն էլ է հոգեւորական ղեկավարում», եւ նրան հետաքրքրեց, ու կինը սիրով միացավ: Նկատեցի, որ շատ երիտ, ում պատմում էինք իրավիճակը Հայաստանում, մեզ հաջողություն էին մաղթում: Մեզ թվում է, թե ամբողջ Եվրոպան մեր դեմ է, բայց այդպես չէ, սովորական մարդիկ, հասարակ ժողովուրդը շատ են ուզում, որ ամեն ազգ իր մշակույթը եւ իր դեմքը պահի, եւ միջոցառումը, որ կազմակերպել էին բանաստեղծները հենց դրա մասին էր. օտարերկրացիները ծանոթացան հայկական մշակույթին:

-Պարոն Մանուկյան, ըստ Ձեզ, ո՞րն է պայքարի հաջորդ փուլը, քանզի ըստ իշխանականների՝ պայքարն արդեն մարել է, եւ ինստ ցկա այն շարունակելու:

-Իշխանականները ստի կայսրությունը կերտած մարդիկ են, պարբերաբար ստում են, դա իրենց գեղն է: Սուտը հասել է այն աստիճանի, որ հանձնվող տարածքների մասին ասում են՝ գիտե՞ք՝ մենք երկու գյուղ հետ բերեցինք: Ծաղրվում է մեր ժողովուրդը, բայց նաեւ տխրում են, որ պատ-



րաստ է ծաղրվելու, այսինքն՝ շատ մարդիկ իրենց ինքնությունից դուրս են գտնվում. Բազրատ Սրբազանը եկել է մեր ինքնությունը մեզ վերադարձնելու համար: Պատահական չեմ համարում, որ Սորոսի ու Էրդողանի ենթակետերը հարձակվում էին եկեղեցու վրա, քանի որ նրանք լավ գիտեին, որ վաղ թե ուշ եկեղեցին ոտքի կկանգնի, եւ եկեղեցին այն ուժն է, որ մեր ինքնությունը վեր կհանի ու հայը կսթափվի: Արդեն արտերկրից ենք հայտարարություններ լսում, թե հայ ժողովուրդն ինչպես է հանդուրժում նման ղեկավարություն... Հանդուրժում են, քանի որ հերթական անգամ խաբվեցին, բայց իշխանությունները շարունակելու են ստել: Մեզ մի ելք է մտում՝ ոչնչացնել չարքապատկաններին, որ նրանք չլինեն մեր հայրենիքում, կամ տիրական ուժ չլինեն, որովհետեւ դրա միջոցով մի հաղթական սերունդ կուտորեցին, հզորների բանակի պարտություն կավերացրին: Ես ժամանակին էլ

հայտարարել եմ, որ զինվորը չպարտվեց, դա քաղաքական պարտություն էր, որի մեղավորները եւ միակ պատասխանատուները ղեկավար իշխանավորներն էին, երբ քաղաքական գնահատական տանք կատարվածին, կտեսնենք, թե ինչ չարագործություններ էին եղել, եւ միակ բանը, որ զարգացել է հայաստանում, եղել է կոռուպցիան: Մենք տեսանք, որ 30 տարվա ընթացքում կուտակված 6 միլիարդ արտաքին պարտքը կրկնապատկեցին այս կարճ ժամանակահատվածում: Ստացվում է՝ նրանք եկել էին ագահաբար հարձակվելու բյուջեի վրա, ու նրանց միակ նպատակը փողն է եղել, այժմ էլ ծաղրում են հայ ժողովրդին, հողերը՝ հանձնում, եւ այս կամ այն երկրից լուսանկարներ հրապարակում կարծես ասելով՝ մենք, հայեր, ձեզ հաղթել ենք:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում: Զրուցեց ԱՆՆԱ ՍՈՎՊԻՈՆՅԱՆԸ

ԲԱՅՐԱՄՈՎԸ ԿՐԿԻՆ ՊԱՐԱՆՋՆԵՐ Է ՆԵՐԿԱՅԱՅՐԵԼ

Ադրբեջանի ԱԳ նախարար Զեյնուլին Բայրամովը կրկին պահանջներ է հնչեցրել ուղղված ՀՀ-ին ու խոսել է ՀՀ սահմանադրությունից: «Հանրությունը պարբերաբար տեղեկացվում է Հայաստանի հետ խաղաղության օրակարգի առաջնահերթությունների մասին: Խաղաղության պայմանագրի բանակցություններում բաց հարցերի թիվը զգալիորեն նվազել է: Դժբախտաբար, Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջները մնում են Հայաստանի Սահմանադրության մեջ: Այս գործոնը պետք է վերացվի, որպեսզի լիովին խաղաղության հասնենք», - նշել է Բայրամովը:

ԼՈՒԱԶՈՆ ԸՆՆԱԳԱՏԵԼ Է ՕՐԲԱՆԻ ԱՅՑԸ ԸՈՒՇԻ

Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի մասնակցությունը Թյուրքական պետությունների կազմակերպության գագաթնաժողովին Հյուսիսային Կիպրոսի ներկայացուցչի հետ Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում խայտառակություն է Հունգարիայի համար: Այս մասին X-ի միկրոբլոգում գրել է Եվրոպական խորհրդարանի անվտանգային ու պաշտպանական հարցերով կոմիտեի նախագահ Նատալի Լուազոն: Նա այս այցն անվանել է նաեւ սկանդալ Եվրոպայի համար՝ շեշտելով, որ Հունգարիայի վարչապետ Օրբանը, փաստորեն, «կասկածի տակ է դնում Կիպրոսի խնդիրը»:

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ ԽՆՋՈՒՅՔՆԵՐԻ ՄԵՋ ԵՆ

Չնայած երկրում առկա անվտանգային լրջագույն խնդիրներին եւ հասարակության սոցիալական անբարվոք վիճակին՝ հայրենի իշխանությունները, գրեթե ամենօրյա ռեժիմով խնջույքների ու քեֆ-ուրախությունների մեջ են: Հիմա էլ ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանն է լուսանկար հրապարակել Վեդիի ՔՊ-ական համայնքապետ Գարիկ Սարգսյանի հետ, որտեղ նրանք համերգի են մասնակցում: «Վեդիում կրկին տոն էր. Հ.Գ. նկարում եւ, Գարիկը եւ Արամը (տր3) Տափի Բերդի ֆոնին (ժողովուրդն այն կոչում է Գեւորգ Սարգսյանու անունով)», - գրել է նա: Կարող ենք արձանագրել, որ ՔՊ-ականները շարունակում են անհաղորդ մնալ երկրում ստեղծված խնդիրներին:

ԿՄԱՍՆԱԿՑԻ ՆԱՏՕ-Ի ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Հուլիսի 9-10-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այցով կգտնվի Վաշինգտոնում: Նախարար Միրզոյանը կմասնակցի ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի՝ գործընկերների ձեռնարկով միջոցառմանը եւ կազմակերպության 75-ամյակին նվիրված հարակից միջոցառումներին: Ծրագրված են նաեւ երկկողմ հանդիպումներ:

ԼՈՒՐԵՐ ՍԱՀՄԱՆԻ ԵՐԿԱՅՆՔՈՎ՝ ՄԵՏԱՂՅԱ ՓՇԱԼԱՐԵՐ

Կիրանց գյուղի նոր ճանապարհի կառուցման աշխատանքներն ավարտին կհասցվեն մոտ ժամանակներս: Այս մասին շաբաթ օրը՝ Տավուրի մարզ կատարած այցից հետո, հայտարարել էր Նիկոլ Փաշինյանը: Կիրանց գյուղում նոր ճանապարհի կառուցելու անհրաժեշտությունն առաջացել էր Տավուրի մարզում սահմանազատման աշխատանքներից հետո: Փաշինյանը ծանոթացել է նաեւ Կիրանց-Աճարկուտ ճանապարհի վերակառուցման աշխատանքների ընթացքին, որոնք ավարտական փուլում են:

Նշենք, որ սահմանազատումից հետո Կիրանց տանող կամուրջը, որը միջպետական ճանապարհի մի մասն է, ադրբեջանական կողմին է անցնում, մայիսի 20-ից մեկնարկվել են հարակից Աճարկուտ բնակավայրով անցնող ճանապարհի կառուցման աշխատանքները:

Նիկոլ Փաշինյանը եղել է նաեւ Հայաստան-Ադրբեջան պետական սահմանի Կիրանցի հատվածում եւ այնտեղից տեսանյութ հրապարակել: Ի դեպ, տեսանյութում երևում է, որ սահմանի ողջ երկայնքով մետաղյա փշալարեր են տեղադրված: Նշենք նաեւ, որ Փաշինյանին ողջ ընթաց-

քում ուղեկցել է Տավուրի մարզպետ Հայկ Ղալունյանը, որը, հանուն Նիկոլ Փաշինյանի հետ ունեցած քաղվոր-սանիկական հարաբերությունների, աչք է փակում Տավուրում տեղի ունեցող գործընթացների վրա:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց նաեւ, որ ի տարբերություն Նախորդ անգամների՝ այս անգամ նա այդպես էլ չհանդիպեց տեղի բնակիչների հետ, հավանաբար՝ նրանց վատ վերաբերմունքից եւ դժգոհություններից խուսափելու համար:

ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՒՇԵՐՅԱՆ

ՈՐՔԱՆ ՌԻՆԵՑՎԱԾՔ ՌԻՆԻ Ռ. ՌՈՒԲԻՆՅԱՆԸ

Ռուբեն Ռուբինյանը ՀՀ Ազգային ժողով է եկել 2021 թվականին հունիսի 20-ին «Զաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ընտրական ցուցակով: 2021 թվականի օգոստոսի 3-ին ընտրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի տեղակալ:

Ռուբինյանի կինը՝ Մարիամ Հաջի-Հակոբյանը, եւս աշխատում է ՀՀ Ազգային ժողովում որպես գլխավոր մասնագետ:

2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի համաձայն՝ Ռուբինյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա

դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 32 մլն 057 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է, հենց այստեղից ենք տեղեկանում, որ ԱԺ նախագահի տեղակալը ունի նոր բնակարան Երեւան քաղաքում:

Ռուբինյանը տրանսպորտային որեւէ միջոց չի հայտարարագրել: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 10 մլն 396 հազար դրամ, հաշվետու տարվա եկամուտները՝ 17 մլն 483 հազար դրամ: Եկամուտներից 14 մլն 051 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԱԺ աշխատակազմից, իսկ 2 մլն 860 հազար դրամը ստացել է ՀՀ ֆինանսների նախարարությանից, որը եկամտահարկի վերադարձի օրենքով՝ հիփոթեքի մայր գումարի մնացորդը մարելու համար է:

Եկամուտներից 570 հազար դրամը վարկ է «Ինտելոբանկ»-ից:

Ռուբինյանը վարկերի մարմանն ուղղել է 3 մլն 609 հազար դրամ, անշարժ գույքի վերանորոգմանն ուղղել է 11 մլն 406 հազար դրամ:

Ռուբինյանի կինը հաշվետու տարվա եկամուտներում հայտարարել է 2 մլն 650 հազար դրամ եւ 900\$ դրլար գումար, որը ստացել է հարսանեկան արարողության հյուրերից: Ազգային ժողովի աշխատակազմից Մարիամ Հաջի-Հակոբյանը որպես աշխատանքի վարձատրություն ստացել է 4 մլն 461 հազար դրամ:

ԷՄԱ ՍԻՔՍԵԼՅԱՆ

«ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻ ՆՈՐ՝ ԱՂՄԿԱՐԱՐՈՒՅՑ ՆԱԽԱԳԻԾԸ

ԳԱԶԱՅՈՒՄ ԶՈՐՎԱԾ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐԸ ՏՎՅԱԼՆԵՐ

Գազայի հատվածում իսրայելական զինվորականների գործողությունների հետևանքով 2023 թվականի հոկտեմբերից՝ անկլամում գործողություններ սկսելուց հետո, Գազայի հատվածում զոհվել է գրեթե 38,2 հազար մարդ, վիրավորվել՝ մոտ 88 հազարը: Այս տվյալները հրապարակել է Գազայի առողջապահության նախարարությունը:

«Գազայում իսրայելական ագրեսիայի զոհերի թիվն այժմ հասել է 38193-ի, եւս 87903 մարդ վիրավորվել է», - ասվում է գերատեսչության պաշտոնական Telegram ալիքի հրապարակած հաղորդագրության մեջ: Առողջապահության նախարարությունը հավելել է, որ վերջին 24 ժամվա ընթացքում Գազայի տարբեր շրջաններում իսրայելական հրետակոծությունների եւ օդային հարձակումների հետևանքով 40 պաղեստինցի է զոհվել, 75-ը՝ վիրավորվել:

ՏԻԳՐԱՆ ԱՐԻԱՐԱՄՅԱՆԵՐ ԱՆԿՐԱԿԱՐԶԸ

«Այսպես կոչված սահմանային ճշգրտումները «օդում թողնելուց» եւ միակողմանի զինումներից հետո ԶՊ-ն տարբեր խմբերով վրայաժողով է անում Տավուշի հանձնված ուղղություններով»: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ՀՀ ԱԺ ընդդիմադիր պատգամավոր Տիգրան Աբրահամյանը:

«ԶՊ-ի կողմից իրականացվող ավանդական տեխնոլոգիա է՝ հանձնումը, տապալումը, զինումը ներկայացնել հարթակակ, ու դա անել այնպիսի ոգեւորությամբ՝ կարծես, մեծ լավություն եւ արել հայ ժողովրդին:

Նույնիսկ այդ ֆոնը ստեղծելու դեմքերը պատահական չեն ընտրվում՝ ԶՊ-ին «չեստ տվող» համազգեստավորներից մինչեւ վարկաբեկված պերսոնաժներ:

Երբ այդ ամենը ֆիլտրում ես՝ տակը մտում ես հող, ունեցվածք, անվտանգություն կորցրած մարդիկ եւ խաբված հասարակություն», - գրել է նա:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎՍՏԻՆ ԵՆ «ՉԱՆԵՐԸ»

Ֆրանսիայի արտաքինը խորհրդարանական ընտրություններում հաղթանակ է տարել «Նոր ժողովրդական ճակատ» ձախակողմյան կուսակցությունների կոալիցիան՝ Ժան Լյուկ Մելանշոնի գլխավորությամբ՝ Ֆրանսիայի ԱԺ-ում ստանալով 182 մանդատ:

Երկրորդ տեղը զբաղեցրել է նախագահ Էմանուել Մակրոնի կոալիցիան՝ ստանալով 168 մանդատ, իսկ երրորդ տեղը՝ Մարին Լը Պենի «Ազգային միավորումը», որը Ֆրանսիայի խորհրդարանի ստորին պալատում ներկայացված կլինի 143 պատգամավորով:

Ընտրությունների արդյունքներով հանրապետականները Ֆրանսիայի Ազգային ժողովում կստանան 45, իսկ մյուս բոլոր կուսակցությունները՝ 39 մանդատ:

Հայաստանում կրոնյաբնույթի հիմնական ընդհանուր դեղորայքով ամբուլատոր կամ հիվանդանոցային դասի մեծությամբ, սեռաբաշխումը կարող են նվազեցնել, իսկ սուրճահամայն կնոջ համար նախաձեռնված սարիքը կբարձրացվի:

ԶՊ-ական պատգամավորները հերթական աղմուկահարույց նախագիծն են հեղինակել, որն այս շաբաթ կքննարկվի ԱԺ արտահերթ նստաշրջանում:

«Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրինագծի հեղինակները ԶՊ-ական պատգամավորներն են՝ Նարեկ Զեյնալյանը, Լուսինե Բաղայանը, Տաթևիկ Գասպարյանը եւ Լենա Նազարյանը:

Գործող օրենքով միայն հիվանդանոցային պայմաններով եւ գործիքային մեթոդներով են թույլատրում հիվանդանոցային արհեստական ընդհատումը, ԶՊ-ականներն առաջարկում են ավելի հասանելի դարձնել սա եւ մինչեւ 8 շաբաթական հիվանդանոցային թույլատրելի դեղորայքային արհեստական ընդհատումը՝ զինվորական կազմակերպություններում, ինչպես ամբուլատոր, այնպես էլ հիվանդանոցային պայմաններում:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության ցուցումով նախատեսվում է մինչեւ 12 շաբաթական հիվանդանոցային արհեստական ընդհատում, Հայաստանում որոշել են շեմը իջեցնել:

ԶՊ-ականներն առաջարկում են նաեւ ՀՀ-ում թույլատրել սեռաբաշխումը, արտահանումը եւ ներմուծումը:

«Կարգավորումներ կան նաեւ սեռաբաշխների պահպանման, արտահանման, ներմուծման, ոչնչացման հետ կապված:



Սա քննարկել ենք մեր բժշկական կազմակերպությունների հետ: Գործող օրենսդրությամբ որեւէ կարգավորում չկար, թե իրենք ինչ պետք է անեն այն սեռաբաշխները, որոնք չեն օգտագործվել: Հիմա կարգավորումներ ենք մտցրել, որ կենսաբանական ծնողը կարողանա նվիրատվություն կատարել սեռաբաշխը բժշկական կազմակերպությանը, կարողանա արտահանել, ներմուծել: Բժշկական կազմակերպություններին իրավասություն են տվել կատարել ոչնչացում կենսաբանական ծնողի կամ ծնողների թույլտվությամբ: Նաեւ որոշակի սահմանափակումներ ենք մտցրել ազգությամբ ոչ հայերի համար, հաշվի առնելով կարիքը՝ առավելությունը տվել ենք ազգությամբ հայերին», - այսօր ԱԺ առողջապահության

հարցերի հանձնաժողովի նիստում հայտարարեց հանձնաժողովի նախագահ Նարեկ Զեյնալյանը:

ԶՊ-ականների հեղինակած նախագծով առաջարկվում է նաեւ փոխնակ մայր ծառայություններից օգտվողների տարիքային շեմը բարձրացնել 53-ից 55, իսկ սուրբազատ մոր տարիքը 35-ից բարձրացնել 38:

Նախագծով առաջարկվում է նաեւ փոխնակ մոր ծառայությունից օգտվելու իրավունքը չտարածել օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաեւ հիվանդանոց կրելու բժշկական հակացուցում չունեցող կնոջ նկատմամբ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՒՆԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

Ս.ՊԱՊԻԿՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱՐԱԳԻՐԸ

Սուրեն Պապիկյանը ՀՀ պաշտպանության նախարար է նշանակվել 2020 թվականի պատերազմից հետո՝ 2021 թվականի նոյեմբերի 15-ին:

Մինչ պաշտպանության նախարար դառնալը Սուրեն Պապիկյանը եղել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար, ապա ՀՀ փոխվարչապետ: 2018 թվականից «Իմ քայլը» շարժման նախագահն էր անդամ է, նաեւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամ է:

Սուրեն Պապիկյանը, 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի համաձայն, ունի 4 անշարժ գույք՝ 1 բնակարան բազմաբնակարան շենքում՝ միանձնյա սեփականությամբ, որը ձեռք է բերել 2019 թվականին Արաբկիր վարչական շրջանում եւ 3 հողամաս՝ համատեղ սեփականությամբ, որոնք գտնվում են Լոռու մարզի Լոռի Բերդ գյուղում եւ ձեռք է բերել 2003 թվականին:

Նախարար Պապիկյանը որեւէ տրանսպորտային միջոց չի հայտարարագրել: Նրա բանկային հաշիվների մացորոկները կազմել են 18,6 մլն դրամ, 10,4 հազար եվրո, 17,5 հազար դոլար: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 20 հազար դոլար, 10 հազար եվրո:

ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի՝ հաշվետու տարվա

եկամուտները կազմել են 31 մլն 101 հազար դրամ, որից 21 մլն 499 հազար դրամը նախարարի աշխատանքի վարձատրությունն է ՀՀ պաշտպանության նախարարությունից: Սուրեն Պապիկյանը վարձակալության դիմաց ստացել է 7 մլն 805 հազար դրամ եկամուտ:

Նախարարի՝ ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 58 մլն 305 հազար դրամ, որից տեղեկանում ենք՝ Պապիկյանն ունի հիփոթեքով ձեռք բերված 2 բնակարան եւ 1 ավտոկայանատեղի: Եկամուտներից էլ տեղեկանում ենք, որ Պապիկյանը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 1 մլն 796 հազար դրամ, որը եկամտահարկի վերադարձի օրենքով հիփոթեքի մայր գումարի մնացորդը մարելու համար է:

Սուրեն Պապիկյանը վարկերի մարմանն ուղղել է 17 մլն 253 հազար դրամ, անշարժ գույքի վերանորոգման համար տրամադրել է 5 մլն դրամ:

ԷՆԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՊԵՏՔ Է ԿԵՏՆԻՐՈՆԱՆՔՆԵՐ ԲԱՅՅԼԵՐԻ ՎՐԱ»

«Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ, քաղաքական վերլուծաբան Վահե Հովհաննիսյանն իր ֆեյսբուքյան էջում գրառում է արել, որը ներկայացնում ենք ստորև:

«Անհանգստության իրական աղբյուրը Շատերը մտահոգ են (զուգե՛ ոչ անհիմա) Իրանում Փեգեշխանի հաղթանակով՝ համարելով աղբյուրներից: Մինչ այդ մտահոգ էինք Բալոյենի հնարավոր պարտությունից (զուգե՛ ոչ անհիմա), ավելի վաղ մտահոգ էինք Մակրոնի պարտությամբ, Լուկաշենկոն վաղուց «աղբյուրանալու» է, իսկ Պուտինը՝ «Էրդոհանի դաշնակիցը»: Գուցե այս բոլոր մտահոգությունները տեղին են, բայց ճիշտ եզրահանգման մենք չենք գալիս արդեն մի քանի տարի շարունակ:

1. Եթե նույնիսկ Թեհրանում, Վաշինգտոնում, Մոսկվայում, Թբիլիսիում, Անկարայում միաժամանակ իշխանության գան պրոտոպեգնական ուժեր, բայց Հայաստանում լինի իրական պետական մտածողությամբ հայկական իշխանություն, Հայաստանը գրագետ քաղաքականությամբ եւ գրագետ քայլերով կարողանա պաշտպանել իր շահերը՝ ձեռք բերելով դաշնակիցներ հենց այդ երկրներից:

2. Եթե Թեհրանում, Վաշինգտոնում, Մոսկվայում, Թբիլիսիում, Անկարայում միաժամանակ իշխանության գան պրո-հայկական ուժեր, իսկական հայամետներ, բայց Հայաստանում լինի այսօրվա պես աղետաբեր իշխանություն, մեզ ոչինչ չի փրկի կորուստներից ու ողբերգությունից, միշտ կլինենք «թույլ եւ մեղավոր»՝ առանց դաշնակցի:

Հետեւաբար՝ կենտրոնանալ պետք է սեփական իշխանության որակի վրա: Մնացածը կառավարելի իրավիճակներ են»:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱԽԱՋԻ ՄԱՐԿԱՆ ԴԵՊՔԸ

ՔՐՎԱՐՈՒՅԹ՝ ԻՆՔՆԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ

«Տողովուրդ» օրաթերթի բացառիկ սեղեկությունների համաձայն՝ իրավադաշնակները հայտնաբերել են Գեղարքունիքի մարզի ցամաքային դատարանի մարզի նախագահի զստաբան Կարեն Սերվանցյանի խաչաքային անբարեգործությունները:

Ըստ նախնական վարկածի՝ վերջինս իր նոր գնված ատրճառակով մտել է իր տան սենյակ՝ այն մաքրելու նպատակով: Քիչ անց լսվել է կրակոց, որից հետո հայտնաբերել են նրա դին:


Ըստ մեր տեղեկությունների՝ քրեական վարույթ է նախաձեռնվում ինքնապանության հատկանիշներով: Մեր աղբյուրները չեն բացառում, որ դա եղել է անզգուշության հետևանք:

Հիշեցնենք, որ խաչաքայինը անցած տարի ազատվել էր պաշտոնից ու անցել թոշակի:

«Տողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ Կարեն խաչաքայինի առեղծվածային մահվան դեպքից: Բանն այն է, որ Գեղարքունիքի դատախազության դատախազ Կարեն խաչաքայինը 2023 թվականի օգոստոսի 2-ին ազատվել էր պաշտոնից: Նրա եղբայրը՝ Կամո խաչաքայինը, ես դատախազ է եղել եւ աշխատել է Գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ ու պաշտոնից ազատվել է 2023 թվականի մարտի 27-ին:

Արդյունքում՝ դատախազությունից ազատված երկու եղբայրներն էլ դիմել էին ՀՀ քննչական կոմիտե՝ աշխատելու նպատակով ու, արդյունքում, երկու դատախազ եղբայրներն էլ հաղթահարել են անցողիկ շեմը, սակայն ողբերգական ու առեղծվածային դեպքը իլեգե եղբայրներից Կարեն խաչաքայինի կյանքը: Իրավապահները, հաշվի առնելով դեպքը, երեկվանից նոր սկսել են քննչական գործողությունները:

Նշենք, որ կոմիտեն հայտնել էր, որ 2024թ. հուլիսի 7-ին՝ ժամը 00:35-ին, «Վարդենիս» ԲԿ-ից ահազանգ է ստացվել այն մասին, որ Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղում կանչով մեկնած



շտապօգնություն արձանագրել է 54-ամյա Կարեն խաչաքայինի մահը՝ հրազենի գործադրմամբ:

Դեպքի փաստով 2024թ. հուլիսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ՀՀ ՔԿ Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության շրջանակում ստացված խիստ նախնական, քննությանը դեռևս լիարժեք ստուգման ենթակա տվյալներով՝ Կ. խաչաքայինը նույն օրը՝ ժամը 00:30-ի սահմաններում, իրենց տանը իրեն ամրակցված «BERETTA APX» տեսակի հրազենը մաքրելու ժամանակ, զենքի հետ անզգուշ վարվելու հետևանքով, արձակված կրակոցից ստացել է կյանքի հետ անհամատեղելի հրազենային վնասվածք:

Դեպքի վայրի զննությամբ բնակարանի հյուրասենյակում հայտնաբերվել է Կ. խաչաքայինի մարմինը՝ աջ աջքի հատվածում հրազենային վնասվածքով: Առգրավվել է հիշյալ հրազենը, մեկ կրակված պարկուճ, վերցվել են արյան հետքեր:

Նշանակվել են դիակի դատաբժշկական, դատաձգաբանական, դատակենսաբանական և դատաքիմիական փորձաքննություններ:

Դեպքի հանգամանքները պարզելու համար ՀՀ ՆԳՆ ոստիկանության Վարդենիսի բաժնին տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարություն:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԱԱԾ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արցախի ԱԱԾ-ի նախկին ծառայողները կարող են աշխատանքի անցնել ՀՀ-ում: Հայաստանի կառավարությունը փոփոխություն է կատարել «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում, որով Արցախի Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների համար աշխատանքի անցնելու հնարավորություններ է նախատեսում Հայաստանի ԱԱԾ-ում:

Օրենքի նախագիծը կքննարկվի այս շաբաթ մեկնարկող ԱԺ արտահերթ նստաշրջանին:

Փոփոխությունների նպատակը հետևյալն է՝ ՀՀ ԱԱԾ-ում ծառայել ցանկացողների շատերը ղեկավար եւ բարձր պաշտոններ են զբաղեցրել Լեռնային Ղարաբաղի ԱԱԾ-ում եւ ունեցել սպայական բարձր կոչումներ: Վերանայվել է ԱԱԾ աշխատակիցների ատեստավորման կարգը: Մինչդեռ անգամ նրանց կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալը բավարար հիմք չէր ՀՀ ԱԱԾ-ում հավասար զինվորական պաշտոնի նշանակվելու համար:

Օրենքում համապատասխան փոփոխություններից հետո արգելքը կվերացվի եւ Արցախի Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցներին հնարավորություն կընձեռնվի աշխատել ՀՀ ԱԱԾ-ում:

ԳՈՒՅՔԸ ԿԲՈՆԱԳԱՆՉՎԻ ԵՎ ԿՎԱՃԱՌՎԻ

Հայաստանում հարուցված քրեական գործի շրջանակներում Գլխավոր դատախազության եւ ԱՄՆ իրավասու մարմինների միջեւ արդյունավետ համագործակցության արդյունքում ԱՄՆ իրավասու դատարանի որոշմամբ հանցավոր ծագում ունեցող գույք դիտարկվող ՀՀ ֆինանսների նախկին նախարար Գագիկ խաչաքայինի ընտանիքին պատկանող ԱՄՆ Լոս Անջելեսում գտնվող առանձնատունը կընթացվի եւ ամենաբարձր շուկայական արժեքով կվաճառվի:

Առանձնատան իրացման արդյունքում ստացված դրամական միջոցների գերակշիռ մասը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու հարցի շուրջ Գլխավոր դատախազության եւ ԱՄՆ իրավասու մարմնի միջեւ բանակցություններ են ընթանում:

Հիշեցնենք, որ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցված քրեական գործով Գուրգեն եւ Արտյոմ խաչաքայինների նկատմամբ իրականացվում է հանրային քրեական հետապնդում, այդ թվում՝ փողերի վլացման մեղադրանքով (Արտյոմ խաչաքայինի վերաբերյալ գործն ուղարկվել է դատարան, Գուրգեն խաչաքայինի նկատմամբ հայտարարված է հետախուզում), իսկ Գագիկ խաչաքայինի կողմից պաշտոնական լիազորությունները չարաշահելու, առանձնապես խոշոր չափերով հափշտակություններ կատարելու, փողերի վլացմանը հանցակցելու եւ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու վերաբերյալ գործը ներկայում քննվում է Երեւան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում:

ԻՐԱՎԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԾԵԾԿՈՏՈՒՔԻ ԽՆԱՄԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ

«Տողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հուլիսի 7-ին՝ ժամը 22:50-ին 4-րդ գյուղի ճանապարհին երիտասարդների միջեւ ծեծկռուք է սկսվել: Իրավապահներին ահազանգ է ստացվել, որ «Հաղթանակ» պանդոկի մոտ միմյանց են սպանում:

Արդյունքում՝ մինչ իրավապահները գնացել են դեպքի վայր, ժամը 23:40-ին «Աստղիկ» հիվանդանոցից ահազանգել են՝ նշելով, որ որովայնի եւ ոտքի կտրած վերքով բուժօգնության է դիմել Ա. Բ. Ն., իսկ ավելի ուշ պարզվել է, որ նրան դանակահարել է Ա. Ս. Ն., որն էլ այս պահին ձերբակալված է:

Իսկ ինչից է սկսվել վեճը: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ վիճաբանողները խնամիներ են եւ մասնակցել են Վարդավառի արարողու-

թյանը: Նրանք գինովցել են ու սկսել մի թեմայի շուրջ վիճաբանել, որից հետո նրանցից մեկը հանել է դանակը ու հարվածել խնամիներից մյուսին:

Վ. ԳԱՄՊԱՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Հուլիսի կայացել է նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի գործով վերջին դատական նիստը:

Հիշեցնենք, որ գործով կան 4 մեղադրյալներ՝ Վլադիմիր Գասպարյանը, Լեւոն Երանոսյանը, Վարդան Թունյանը, Գուրգեն Գրիգորյանը: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին: Գործը մակագրվել է հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վարդգես Սարգսյանին: Վլադիմիր Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել ՔՕ 179-րդ

հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ «յուրացնելը կամ վատնելը՝ առանձնապես խոշոր չափերով» (2 դրվագ) եւ 308-րդ հոդվածի 2-րդ մասով՝ «պաշտոնական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ» (2 դրվագ): Լեւոն Երանոսյանին մեղադրանք է առաջադրվել ՔՕ 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 314-րդ հոդվածի 1-ին մասով՝ «պաշտոնական կեղծիք», եւ 308-րդ հոդվածի 2-րդ մասով:

Վարդան Թունյանին մեղադրանք է առաջադրվել ՔՕ 38(հանցակցություն)-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով: Գուրգեն Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել ՔՕ 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով:

Վլադիմիր Գասպարյանի գործով հանրային մեղադրողը միջնորդեց պատիժ՝ 11 տարի ժամկետով:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 5-ից հուլիսի 8-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 179 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:

ՄԱՐԶ

ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հուլիսի 6-ին այցելել է Տավուշի մարզ՝ Կիրանց, ծանոթացել է Կիրանց-Աճարկուտ ճանապարհի վերակառուցման աշխատանքների ընթացքին, որոնք ավարտական փուլում են: Ծանապարհաշինարարները Նիկոլ Փաշինյանին զեկուցել են, որ արդիականացված ճանապարհը շահագործման կհանձնվի այս ամսվա ընթացքում: Վարչապետին են ներկայացվել նաև Հայաստան-Կրասնաջարի միջպետական ավտոճանապարհի Նոր հատվածի կառուցման աշխատանքները, որոնք ընթացքի մեջ են: Աշխատանքներն ավարտին կհասցվեն հուլիսին: Նիկոլ Փաշինյանը Աճարկուտ գյուղում ծաղիկներով խոնարհվել է 44-օրյա պատերազմում զոհված աճարկուտցի Դավիթ Շահնազարյանի հուշարձանին: 20 տարեկան Դավիթը 44-օրյա պատերազմի ընթացքում եղել է բոլոր թեժ կետերում, անձնուրաց մարտնչել, մասնակցել Քարինտակի պաշտպանության համար մղվող մարտերին, հերոսաբար զոհվել Շուշիի մատույցներում, Նոյեմբերի 7-ին՝ հրադադարից երկու օր առաջ: Բարի, ընկերասեր Դավիթը 4 քույրերի միակ եղբայրն էր: Դավիթ Շահնազարյանը, ինչպես նաև հազարավոր այլ կռվողներ, որք կմնային, եթե 44-օրյա պատերազմի ընթացքում Նիկոլ Փաշինյանը ընդունեք պատերազմը դադարեցնելու առաջարկները: Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ եթե ընդունեք առանց պատերազմի տարածքները հանձնելու առաջարկը, Նույն իրավիճակը կլինեք, սակայն առանց զոհերի:

ՎԱՐՉԱՎԱՐԸ ՀԵՏՈ ԵՆ ՏՈՆԵԼՈՒ

Հայաստանում հուլիսի 7-ին տոնվեք Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը՝ Վարդավառը: Տավուշում Վարդավառը մշտապես տոնվում է հուլիսի 20-ից հետո՝ կիրակի օրը: Քանի որ այս տարի ամսի 20-ից հետո երկու կիրակի կա, Տավուշում Վարդավառը կտոնեն հուլիսի 21-ին, մի ամսն էլ՝ հուլիսի 28-ին: Իսկ Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղում են Բերդ համայնքի գյուղերից մեկում Վարդավառը տոնում են օգոստոսի առաջին կիրակի օրը: Տավուշում վարդավառը շատ շքեղ են տոնում, ընտանիքներով, բարեկամներով մեկնում են անտառներ, գառներ, ուլեր են մորթում, լողանում գետերում, ջրավազաններում, միսյանց վրա առատորեն ջուր լցնում:

ԱՅՍ ՏԱՐԻ ՉԵՆ ՆՈՐՈՔԵԼՈՒ

Նախապես որոշված էր, որ 2024 թ. հունվարի 1-ից մեկ տարի ժամկետով Ռիլիջան-Աեան ավտոմոբիլային թունելը երթեևեկության համար փակվելու է, որպեսզի թունելում վերանորոգման մեծածավալ աշխատանքներ կատարվեն: Թունելը փակվելու դեպքում տրանսպորտային միջոցների երթևեկը պետք է կատարվեր ավելի երկար՝ Սեմյոնովկա գյուղով ձգվող ճանապարհով, որը, սակայն, բարկիջ վիճակում չէ: Ծանապարհաշինական ընկերություններից տեղեկացանք, որ այս տարի Ռիլիջանի թունելը չեն նորոգելու, ներկայումս ընթանում են թունելի նորոգման նախագծի պատրաստման աշխատանքները:

ՈՍՎԱՆ ՍՈՐՈՒՅՄԱՆ Տավուշ

ԱՐԺԵՔՆԵՐ

ՀԱՆԳԻՍՏԸ՝ ԳՅՈՒՄԻՐՈՒՄ ԵՎ ԼՈՌԻՈՒՄ

Գյումրին Հայաստանի՝ մեծությամբ երկրորդ քաղաքն է, որը աչքի է ընկնում իր հնությունով:

Շատ զբոսաշրջիկներ այցելում են Գյումրի՝ հայկական մշակույթին ծանոթանալու համար: Գյումրին հետաքրքիր է ոչ միայն զբոսաշրջիկների այլ նաև հենց տեղացիների համար:

«Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվել է, թե ամառային այս օրերին ի՞նչ արժե հանգիստը այնտեղ:

Այսպիսով՝ «Վալե» հյուրանոցային եւ ռեստորանային համալիրը ունի բար, ռեստորան-պանդոկ՝ գյումրու կոլորիտին բնորոշ ոճով: Հյուրանոցում կա 24-ժամյա սպասարկում, ինչպես նաև անվճար WiFi: Առկա է անվճար փակ ավտոկայանատեղի:

Յուրաքանչյուր սենյակ ունի առանձին սանհանգույց: Բոլոր սենյակներում կա օդորակիչ, բազմոց, հեռուստացույց՝ արբանյակային ալիքներով, լոգարան՝ վարսահարդարիչով, ցնցուղով: Սենյակներում տրամադրում են գրասեղան եւ թեյնիկ: Սենյակների սենյակների արժեքը 10.000 դրամ է:

Երկտեղանին՝ 12.000 դրամ, իսկ երեքտեղանին՝ 15.000:

«Ֆելիսա» հյուրանոցում մեկտեղանի սենյակների արժեքը 16.000 դրամ է: Երկտեղանին՝ 18.000 դրամ:

Հյուրանոցում կա ավտոկայանատեղի, անվճար Wi-Fi ինտերնետ եւ մինիբար:

«Գյումրի» հյուրանոցն առաջարկում է նաև անվճար ավտոկանգառ, բոլոր սենյակներում գործում է անվճար Wi-Fi ինտերնետ:

Հյուրանոցում ստանդարտ մեկտեղանի սենյակների արժեքը՝ 17.000 դրամ է, ստանդարտ երկտեղանին՝ 23.000 դրամ, ստանդարտ երեքտեղանին՝ 35.000 դրամ:

«Պլազա Վիկտորիա» հյուրանոցն ունի շքեղ ու հարմարավետ կահավորված 25 սենյակ՝ նախատեսված 40 հյուրի համար: Գործնական եւ գիտական միջոցառումների համար գործում է կոնֆերանս դահլիճ, հյուրերի տրամադրության տակ են նաև բանակցությունների սենյակներ: Սենյակների սենյակների արժեքը 23.000 դրամ է, երկտեղանին՝ 34.000 դրամ, երեքտեղանին՝ 45.000 դրամ, իսկ յուրս համարները՝ 51.000 դրամ են:



«Բեռլին Արթ Ջոթել»-ում կան 14 երկտեղանի առանձնացվող մահճակալներով համարներ, 4 երկտեղ չառանձնացվող մահճակալներով եւ 1՝ երեք տեղանի առանձին մահճակալներով համարներ:

Մեկ հոգու համար նախատեսված սենյակի արժեքը 27.000 դրամ է, երկու հոգու համար՝ նախատեսվածը՝ 32.000 դրամ, իսկ երեք հոգու համար նախատեսվածը՝ 38.000 դրամ:

Անդրադառնալով Լոռու մարզին՝ պետք է նշել, որ այն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով: Լոռու եւ Տավուշի մարզերը համարվում են Հայաստանի ամենախոնավ մարզերը, սակայն խոնավ եղանակը Լոռու մարզին չի խանգարում լինել Հայաստանի ամենապահանջված հանգստի գոտիներից մեկը:

«Ժողովուրդ» օրաթերթը առանձնացրել է մի քանի հյուրանոցներ եւ հյուրանոցներ, որտեղ այցելուները անցկացնում են իրենց հանգիստը:

Այսպիսով՝ «Լազուս» հյուրանոցում հարմարություններ մեջ է մտնում լվացքատունը, լողավազանը, ավտոկայանատեղիներ, Wi-Fi ինտերնետը, խաղաղաշտը: Հյուրանոցում էկոնոմ մեկտեղանի սենյակի արժեքը 12.000 դրամ է: Էկոնոմ երկտեղանին՝ 16.000: Ոստանեկան համարը՝ 40.000 դրամ:

«Գրին Ջոնու» հյուրանոցում մեկ հոգու համար նախատեսված սենյակի արժեքը 8000 դրամ է: Երկու հոգու համար նախատեսվածը՝ 17.000 դրամ, իսկ կիսալյուքս համարները՝ 20.000 դրամ են: Հյուրանոցը կա ռեստորան, սրճարան, բար, լվացքատուն, ավտոկայանատեղի, կոնֆերանս դահլիճ:

«Թուֆենկյան Ավան Ջորագետ» հյուրանոցում կա 54 հյուրանոցային համար, որոնց թվում են նաև ստանդարտ եւ լյուքս սենյակներ:

Միջին չափսի համարների արժեքը՝ 34.400 դրամ է: Փոքրը՝ 24.000 դրամ: Փոքր դեյուքսը՝ 28.000 դրամ: Ուղարձակ համարների արժեքը 44.000 դրամ է:

Այստեղ նույնպես կա բար, լողավազան, ավտոկայանատեղի, մարզասրահ, կոնֆերանս դահլիճ, խաղաղաշտ:

ՀՄՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՉՆԱՅԱԾ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՏՄԱՆԸ՝ ՓՈՎԿԵԼ Է

ԳՊՐՈՑՆԵՐԸ ՄՏԻՊՎԱԾ ԵՆ ԻՐԱՐ ՄԻԱՑՆԵԼ

Գեո ամիսներ առաջ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Վանաձորի Սայաթ-Նովայի անվան թիվ 10 ավագ դպրոց ոչ առեւտրային կազմակերպությունը առանց ուսուցչական կազմի սեղյակ լինելու փակվում է:

Հիշեցնենք, որ դպրոցի աշխատակիցները մեզ փոխանցել էին, որ դպրոցի տնօրեն հաջատուր Պարանյանը միշտ փափուկ բարձ է դրել նրանց գլխի տակ եւ ասել, որ դպրոցը չի փակվելու, ամեն բան լավ է լինելու:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ կրկին կապ հաստատեց դպրոցի աշխատակիցներից մեկի հետ՝ պարզելու՝ ինչ փուլում են գտնվում դպրոցի գործերը, ի վերջո ինչ որոշում է կայացվել:

«Դպրոցն արդեն փակվել է: Ռեզիստով դպրոցը փակվել է հունիսի 25-ին: Մենք հիմա դպրոցի հանձնման փուլում ենք, մինչև շաբաթվա վերջ կավարտենք», - մեզ հետ զրույցում ասաց Վանաձորի թիվ 10 ավագ դպրոցի աշխատակիցներից մեկը:

«Ժողովուրդ» օրաթերթը նաև հետաքրքրվեց՝ ինչ են անելու հաջորդիվ, քանի որ դպրոցը փակվել է, ինչին ի պատասխան՝ աշխատակիցն ասաց. «Վանաձորի 10-րդ ավագ դպրոցը միացնում են Վանաձորի 13-րդ ավագ

դպրոցին՝ վերակազմավորման ձևով: Մի քանի աշխատող կաշխատի՝ ըստ պահանջարկի: Այս պահին բոլորս ծանուցում ենք ստորագրել, որ մինչև սեպտեմբերի 2-ը բոլորս դեռևս համարվում ենք աշխատանքի մեջ, հիմա արձակուրդում ենք, հետո կվերադառնանք 13-րդ դպրոց»:

Վանաձորի թիվ 10 դպրոցի փոխարեն բացվելու է բնագիտամաթեմատիկական «Էվրիկա» դպրոցը:

Հավելենք, որ վերը նշված 3 դպրոցները գտնվում են Հայաստանի Հանրապետության ԿԳՄՄ ենթակայության տակ:

ԱՆՆԱ ՍՐԱԳԻՈՆՅԱՆ

● Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 33 պատահար. 52 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԼՈՒՐՁ ԽՆԴԻՐՆԵՐ՝ ԱՐՏԱՐԱՆՈՂՆԵՐԻ ՆԱՄԱՐ

Վերին Լարսում կրկին հերթեր են: Վերին Լարսով Վրաստանից Ռուսաստան է հակառակ ուղղությամբ ճանապարհին հերթերի պատճառով զբոսաշրջային սեզոնի սկիզբն է:

Այս մասին հայտնել էր ՌԴ-ում 33 դեսպանատան մաքսային կցորդ Վահան Հակոբյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում տնտեսագետ Սուրեն Պարսյանը ասաց, որ ամեն տարի գյուղմթերքի արտահանման եւ զբոսաշրջության շրջանի հոսքի պայմաններում ունենում ենք որոշակի խցանումներ Վերին Լարսի անցակետում:

«Խցանումները բավականին լուրջ տնտեսական հետեւանքներ են թողնում Հայաստանի արտահանողների վրա, հատկապես գյուղմթերք արտահանողները հաճախ ունենում են մթերման լուրջ կորուստներ, քանի որ փչանում է բերքը: Դրանից բացի, կշեմ, որ պարբերապար խոսվում է՝ Վերին Լարսի անցակետում պետք է ավելացվի թողունակությունը, ավելի կարճ գնումներ իրականացվեն, բայց այդ խոսակցությունները, ըստ էության, վերջնական արդյունք չեն ունենում»:

Խնդրի լուծման համար Սուրեն Պարսյանը առաջարկում է մի շարք աշխատանքներ իրականացնել, այդ թվում է կշեմի տեղադրումը մինչև անցակետ, թողունակության ավելացումը, նաև երեկոյան ժամերին աշխատանք: Տնտեսագետի խոսքով՝ սա կարող է թեթևացնել նման լարվածությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐԳՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ

Հուլիսի 8-ին 33 եկոնոմիկայի նախարար Գեորգ Պապոյանը մասնակցել է Եկատերինբուրգ քաղաքում տեղի ունեցած «Իննսպրոմ» միջազգային ֆորումի շրջանակներում ԱՊՀ անդամ պետությունների արդյունաբերական քաղաքականության խորհրդի տասներորդ նիստին:

«Հայաստանի Հանրապետությունը ձգտում է ակտիվորեն մասնակցել արդյունաբերության զարգացմանը ոչ միայն ազգային մակարդակով, այլև միջազգային համագործակցության շրջանակներում: Մենք բոլոր ջանքերը գործադրում ենք բարենպաստ ներդրումային միջավայր ստեղծելու, օրենսդրության բարելավման եւ արդյունաբերության ոլորտում նորարարություններին աջակցելու համար»,- նշել է նախարարն իր ողջույնի խոսքում:

Խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված էր տարբեր ոլորտներում համագործակցության զարգացման առնչվող հարցերի լայն շրջանակ: Ներկայացվել է թեթև արդյունաբերության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության զարգացման հայեցակարգի նախագիծը եւ դրա իրականացման գործողությունների ծրագիրը:

Fastex

ՀՈՎԱՆՆԱՎՈՐ՝ «Festival d'Avignon» ՓԱՌԱՏՈՆԻՆ

«Ֆասթեքս» իր AKNEYE նախագծի շրջանակում հովանավորում է Հայաստանի մասնակցությունն ամենամյա «Ավինյոն» քառասունհինգ օրե տևողի և ունենում ս.թ. հուլիսի 3-ից 21-ը: «HK Production»-ի ստեղծագործությունները դասուս են զարգարելու ֆրանսիական բեմերը:

Ֆրանսիայի Ավինյոն քաղաքում Festival d'Avignon անունով հայտնի ամենամյա արվեստի նշանավոր իրադարձության սկիզբը տրվել է 1947 թվականին ֆրանսիացի նշանավոր դերասան եւ ռեժիսոր Ժան Վիլարի կողմից եւ դարձել աշխարհի ամենահեղինակավոր մշակութային միջոցառումներից մեկը: Թատրոնի, պարի, երաժշտության եւ վիզուալ արվեստների այս բազմազան ծրագիրը ներգրավում է արվեստագետների եւ հանդիսատեսի ամբողջ աշխարհից:

Ներկայացումները տեղի են ունենում միջնադարյան քաղաքի տարբեր պատմական վայրերում, այդ թվում՝ խորհրդանշական Պապի պալատում (Palais des papes d'Avignon): Հին ճարտարապետության համադրումը ժամանակակից թատրոնի, պարի եւ երաժշտության հետ առաջացնում է յուրահատուկ եւ գրավիչ մթնոլորտ: Պատմական միջավայրի եւ ավանգարդիստական արվեստի միաձուլումից ստեղծվում են ժամանակակից բեմահարթակներ ու նոր շունչ ստացած ներկայացումներ:

2023 թվականի հոկտեմբերին «Հայֆեստ» փառատոնի շրջանակում Հայաստանում էին «Ավինյոն» փառատոնի ներկայացուցիչները: 15-ից ավելի ներկայացում դիտելուց հետո՝ նրանք ընտրել են երկուսը, որոնք այս տարի Հայաստանը պետք է ներկայացնի հուլիսին անցկացվող փառատոնի ընթացքում: Առաջինը Հայաստանի երգի պետական թատրոնի խաղացանկային «Ցուրտ օր դժոխքում» ներկայացումն է, որը բեմադրվել է Յան Բուրեբեբուշի համանուն պիեսի հիման վրա, երկրորդը՝ «ՄԻՅՐ» թատրոնի



«Պանդիստության երգը» պլաստիկ ներկայացումը:

1947 թվականից ի վեր Հայաստանն առաջին անգամ է մասնակցում «Ավինյոնին»: Այդ օրերին ֆրանսիական «Ավինյոն»-ում հայկական տոն է լինելու: Փառատոնի կազմակերպիչները նախաձեռնել են ունենալ Հայաստանի մշակութային օրեր. թատերական ներկայացումներից գատ լինելու են նաև ֆիլմեր: Հուլիսի 8-ին ցուցադրվելու են Հրաչ Զեյնիջյանի «Անտոլիական պատմությունը» եւ Սերժ Ավետիսյանի հեղինակային ֆիլմերից մեկը: Դրանց կհաջորդի հանդիպում ստեղծագործական կազմի հետ: Քաղաքի տարբեր հարթակներում կլինեն համերգային ծրագրեր, կլոր-սեղան քննարկումներ, որտեղ հայկական պատվիրակությունը կխոսի Հայաստանում ժամանակակից արվեստի միտումների եւ զարգացումների մասին:

Միջոցառման շրջանակում տեղի կունենա նաև պատկերազարդում AKN-ի

վրա. հենց այնտեղ հյուրերի ներկայությամբ նկարչուհի Լուիզա Գրագատին կկատարի աշխատանքային ճամփորդության:

«Ֆասթեքս»-ը իր AKNEYE նախագծով, մշտապես աջակցում է հայկական արվեստի եւ մշակութային պահպանմանը, տարածմանը եւ զարգացմանը:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տրամադրում է բազմաթիվ հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange փոխանակման հարթակը եւ ftNFT հարթակը՝ իր դիջիթալ տարածքներով: Fastex-ը կարելի է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը բոլոր օգտատերերի համար համաշխարհային թվային ֆինանսների զարգացող ոլորտում մշտապես հետեւելով առկա կանոնակարգերին:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ԱՐՄԱՆ ԵՂՈՅԱՆԸ

Արման Եղոյանն Ազգային Ժողով է եկել 2021 թվականի հունիսի 20-ին «Քաղաքացիական դայնամիկ» կուսակցության համադեմոկրատիկ ընտրական ցուցակով:

Պատգամավորը նախկինում եղել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսնակը, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

Արման Եղոյանի՝ 2023 թվականի անշարժ գույքի, եկամտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի համաձայն՝ նա ունի 3 անշարժ գույք՝ 1 բնակարան բազմաբնակարան շենքում, 1 հողամաս, 1 ավտոտնակ: Հողամասը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում, այն ձեռք է բերվել 2020 թվականին: Բնակարանը եւ ավտոտնակը գտնվում են Երեւան քաղաքում, գույքերը ձեռք են բերվել 2021 թվականին որպես ժառանգություն:

Հաշվետու տարվա ընթացքում Եղոյանը եւս մեկ հողամաս նվիրատվությամբ փոխանցել է կնոջը, սակայն նվիրատվության

հանձնված հողամասի մասին ոչ տարվա սկզբում առկա գույքերի ցանկում կա, ոչ տարվա ընթացքում ձեռք բերված գույքերի ցանկում:

Ստացվում է, որ բոլոր գույքերն Արման Եղոյանը ձեռք է բերել հեղափոխությունից հետո:

Աժ պատգամավոր Արման Եղոյանը սեփական տրանսպորտային միջոց չի հայտարարագրել, սակայն շահագործում է սեփական իրավունքով իրեն չպատկանող 2016 թվականի արտադրության MAZDA մակնիշի մեքենա: Եղոյանի կնոջ՝ Քրիստինա Հունանյանի, հայտարարագրից հասկանում ենք, որ նշված մեքենան իրեն է պատկանում: Քրիստինա Հունանյանը տարեսկզբին ունեցել է 2010 թվականի արտադրության TOYOTA մակնիշի մեքենա՝ ձեռք բերված 2019 թվականին: MAZDA մակնիշի մեքենան, որի մասին նշել էինք, Հունանյանը ձեռք է բերել 2023 թվականին 3 մլն 890 հազար դրամ արժեքով, ապա TOYOTA-ն հաշվետու տարվա

ընթացքում վաճառել է գրեթե 1000 դոլար էժան գնով՝ 3 մլն 120 հազար դրամով:

Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են գրեթե 2,5 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 100 հազար դրամ: Եղոյանի՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 47 մլն 441 հազար դրամ, որից միայն 11 մլն 964 հազար դրամ է աշխատանքի վարձատրություն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից, իսկ 33,7 մլն դրամը վարկեր են «Հայէկոնոմ» բանկից եւ «Ինտելեբանկ»-ից:

Արման Եղոյանը նվիրատվություն է ստացել իր քրոջից՝ Նոնա Եղոյանից, 1 մլն 650 հազար դրամ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 33 մլն 058 հազար դրամ, որից 26 մլն 842 հազար դրամը հողամասի եւ բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆՈՐ ՍԿԻՋԲ, ԹԵ՛ ԱՎԱՐՏ

ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ԸՆԴՈՒՑՎԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Գերասան Սամվել Թոփալյանը, ով նաև «Գոյ» բասրոնի գերասաններից էր, գրառում էր կասարել, որում նույն էր, որ ազատվել է աշխատանքից, իսկ հետո էլ Տեղեկություն ստանալուց, որի համաձայն՝ աշխատանքից ազատվել են բասրոնի բոլոր գերասանները:

«Ժողովուրդ» օրաթերթն այս հարցով կապ հաստատեց «Գոյ» թատրոնի ռեժիսոր Սարգիս Արզումանյանի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արզումանյանն ասաց, որ «Գոյ»-ի դերասանական անձնակազմին աշխատանքից ազատել է «Գաբրիել Սունդուկյանի» անվան թատրոնի տնօրինությունը:

«Բոլորն էլ, այո, հեռացված են, որովհետև վերջում մնացել էին 2 հոգի: Խնդիրը հետեյալն է՝ օրենքի խախտմամբ՝ «Գոյ» թատրոնն ու «Սունդուկյան» թատրոնը միացվել էին իրար, իսկ «Գոյ» թատրոնը բազմիցս հայտարարել է, որ չի միանալու եւ չի աշխատելու «Սունդուկյան» թատրոնում, իսկ «Սունդուկյան» թատրոնն էլ անձնակազմին իրազեկել էր եւ ծանուցում էր ուղարկել, որ պայմանների փոփոխություն պետք է լինի՝ «եկեք ստորագրե՛ք եւ աշխատե՛ք»: Զիմա մենք, բնականաբար, չենք զնացել, չենք ստորագրել եւ չենք աշխատել, իսկ օրենքով սահմանված հատվածում էլ «Սունդուկյան» թատրոնը մեզ պետք է աշխատանքից ազատեր, ինչը, որ արել է, նորմալ երեւոյթ է»,- ասաց Սարգիս Արզումանյանը:

Սարգիս Արզումանյանից «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց՝ ինչ է սպասվում հաջորդիվ, ինչին ի պատասխան՝ Արզումանյանն ասաց. «Նստացույց դադարեցրել ենք, բանակցությունների փուլում ենք ԿԳՄՍ-ի հետ: Աշխատում ենք անկախ թատրոնի կարգավիճակի համար: Երեւի թե 2 ամսից արդեն շոշափելի արդյունք կունենանք»:

Ավելի վաղ դերասան Սամվել Թոփալյանը ֆեյսբուքյան էջում գրառում էր կատարել, որից տեղեկացել էինք որ դերասանին ազատել են աշխատանքից:

Նա նամակ է ստացել, որում գրված է եղել, որ առաջին կարգի դերասան է, սակայն ազատված է աշխատանքից:



«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Թոփալյանն ասաց, որ նամակը ստացել է «Գաբրիել Սունդուկյանի» անվան ազգային ակադեմիական թատրոնի տնօրինությունից, քանի որ «Գոյ» թատրոնը, որպես ՊՈԱԿ, այլևս չկա, իրավահաջորդը Սունդուկյան թատրոնն է:

«Ինձ 2 ամիս առաջ արդեն ազատել էին, ուղղակի նամակը նոր է հասել ինձ: Ծանուցել են, որ գնամ պայմանագիրն իրենց հետ երկարացնեն, որպեսզի դառնան Սունդուկյան թատրոնի դերասան: Ես չեմ զնացել, չեմ ստորագրել, այո՛ իսկ պատճառով ազատել են աշխատանքից»:

Սամվել Թոփալյանն այս քայլը չի կապում քաղաքական որեւէ գործառնությունների հետ:

Նրա խոսքով՝ բոլոր դերասաններին ազատել են, քանի որ ոչ ոք չի ստորագրել պայմանագիրը:

«Զիմա բանակցություններ են ընթանում նախարարության հետ, որպեսզի նույն տարածքում, բայց մասնավոր հիմունքներով մենք շարունակենք մեր աշխատանքները»:

Զիշեցնենք, որ մարտի վերջից փակվել է թատրոնի դուռը, եւ դերասանները չեն կարողանում մուտք գործել եւ փորձեր անել: Դրանից հետո «Գոյ» թատրոնի կառավարման խորհրդի նախագահ, ռեժիսոր Սարգիս Արզումանյանն անժամկետ նստացույց էր հայտարարել: Այնուհետեւ նստացույցի 6-րդ օրը նա ժամանակավոր դադարեցրեց այն՝ հայտնելով, որ ԿԳՄՍ նախարարությունից ունեն արձագանք, որ ցանկություն կա հանդիպելու, խոսելու, բանակցելու եւ այս ամենը կազմակերպելու:

ՄԱՆԱ ՄՐԱՊԻՈՆՅԱՆ, ԷՄԱ ՄԱՐՏԻՐՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՊԱՅՔԱՐԵՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի բակետբոլի տարբեր տարիքային հավաքականները սկսում են պայքարը Եվրոպայի առաջնություններում:

Կանանց Հայաստանի Մ16 տարեկանների հավաքականը հուլիսի 9-ից 14-ը Զիբրալթարում կմասնակցի Եվրոպայի առաջնության C դիվիզիոնի հանդիպումներին:

Ալբերտ Հարությունյանի գլխավորությամբ Զիբրալթար են մեկնել հետեյալ խաղացողները՝ Սուսաննա Խաչատրյան, Անելի Մարտիրոսյանս Քեշ, Լիլիթ Գեորգև, Մարիամ Գրիգորյան, Մարգարիտ Հարությունյան, Արենի Օհանյան, Սարինե Դերդերյան, Էմիլի Շաբանի, Զիաննա Կելիկյան, Ավա Դարիբ, Քելին Շաջանյան, Աննա Սիմոնյան:

Կանանց Մ16 տարեկանների հավաքականն ընդգրկվել է C դիվիզիոնի A ենթախմբում, որտեղ կմրցի Կրասսանի, Ադրբեջանի եւ Կիպրոսի հավաքականների հետ:

Տղամարդկանց Հայաստանի Մ16 տարեկանների հավաքականը հուլիսի 9-ից 14-ը Ալբանիայում կմասնակցի Եվրոպայի առաջնության C դիվիզիոնի հանդիպումներին:

Արեգ Վաթայանի գլխավորությամբ՝ Ալբանիա են մեկնել հետեյալ խաղացողները՝ Ստեփան Մավյան, Էդգար Աղաբեկյան, Էդուարդ Մնացականյան, Արթուր Ավագյան, Նշան Քեշիջյան, Ռաֆայել Մատույան, Անդրեյ Վոզնետրով, Վահե Ապրեսյան, Դավիթ Կակոյան, Բազարտ Խաչատրյան, Գագիկ Հարությունյան: Մարզական շտաբում ընդգրկված են նաեւ Թովմաս Օրդանյանը եւ Սերգեյ Ավետիսյանը:

ՊՐԵՄԻԵՐ ԼԻԳԱՅԻ 11 ՄԱՍՆԱԿԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ֆուտբոլի Հայաստանի Պրեմիեր լիգայի 2024/25 մրցաշրջանին կմասնակցի 11 ակումբ:

ՀՖՖ գործկուսի նիստում հաստատվել է 2024-2025 թթ. պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգը: Հայաստանի հաջորդ առաջնությանը կմասնակցեն «Փյունիկը», «Նոան», «Արարատ-Արմենիան», «Ուրարտուն», «Արարատը», «Ալաշկերտը», «Վեստ Արմենիան», «Շիրակը», «Վանը», ԲԿՄԱ-ն, ինչպես նաեւ Առաջին խմբի նախորդ մրցաշրջանի հաղթող Կապանի «Գանձասարը»:

ՄՐՑԱԽԱՂԸ՝ ՄԻՆԳԱՊՈՒՐՈՒՄ

Շախմատի աշխարհի չեմպիոնի կոչման համար մրցամարտը կկայանա Նոյեմբերի 20-ից դեկտեմբերի 15-ը՝ Սինգապուրում, հայտնում է ՖԻԴԵ-ի մամուլի ծառայությունը:

Տիտղոսի համար կմրցեն աշխարհի գործող չեմպիոն, չինացի Դին Լիժենը եւ հավակնորդների մրցաշարի հաղթող հնդիկ Գուկեշ Դոմարաջուն: Մրցանակային ֆոնդը կկազմի 2,5 միլիոն դոլար:

Զիշեցնենք, որ նախորդ տարվա ապրիլին Աստանայում անցկացված շախմատային թագի պայքարում Դին Լիժենը հաղթել էր ռուս Յան Նեպոմյաշչինի:

ՆԱԿԱՏԵՍՎԱԾ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՏԱՃԱՐՆԵՐԻ, ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ԿԳՄՍ նախարարության դասնության եւ մշակույթի հուշարձանների դահլիճային մասնագետները մշակույթի հարցերի մասին անդամներ:

Աշխատանքային խումբն այցելել է Արագածոտնի մարզի Գառնահովիտ գյուղի 7-րդ դ. թվագրվող Սբ Գեորգ եկեղեցի, որտեղ ԿԳՄՍ նախարարության եւ բարերար Համլետ Թադևոսյանի համագործակցությամբ իրականացվում են եկեղեցու վերականգնման աշխատանքներ: Ներկա պահին կատարվում են հուշարձանի տանիքածածկի իրականացման աշխատանքները: Համաձայն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի՝ նախատեսված է դրանք իրականացնել կղմինդրե սալիկներով: Մասնագիտական խումբը տեղում ծանոթացել է օգտագործվող սալերի որակին, ուսումնասիրել իրականաց-

ման մեթոդները եւ քննարկել հետագա աշխատանքների հաջորդակառուցությունը:

Խումբն այցելել է նաեւ Արագածոտնի մարզի Մաստարա գյուղի միջնադարյան Սբ Զովահնես եկեղեցի, որը համարվում է միջնադարյան Հայաստանի հնագույն ու կատարյալ կառուցվածքից մեկը եւ առանձնապես իր ճարտարապետական ոճով: Ժամանակին այն շրջապատված է եղել պարիսպներով, որոնք 1889 թվականին՝ եկեղեցու վերանորոգման ընթացքում, քանդվել են: Եկեղեցին գտնվում է համեմատաբար լավ վիճակում, սակայն մասնազտներն արձանագրել են, որ այն ունի տանիքածածկերի նորոգման խնդիր:

Հաջորդ այցը Շիրակի մարզի Անիպեմ-գա համայնքի Երեբունյքի վաղբրիստոնեական տաճար էր: Հաշվի առնելով տաճարի բացառիկությունը՝ այն մշտապես գտնվել է պետության ուշադրության ներքո, պարբերաբար ամրակայվել եւ մասնակի վերականգնվել է: Վերջին տարիներին եւս պետությունը պատվիրել է տաճարի ամրակայման նախագիծ, որն իրականացրել է Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանը: ԿԳՄՍ նախարարության եւ Հայաստանում ԱՄՆ դեսպանության միջեւ 2023 թ. ստորագրված հուշաթերթի համաձայն՝ ԱՄՆ դեսպանի «Մշակութային արժեքների պահպանության հիմնադրամը» 175 հազար դոլար է հատկացրել Երեբունյքի բազիլիկ տաճարի պահպանության նպատակով, որից 58 միլիոն ՀՀ դրամ գումարը նախատեսված է 2024 թ. տաճարի ամրակայման եւ մասնակի վերականգնման աշխատանքների իրականացման համար: Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության աշխատակիցները տեղում ուսումնասիրել են արդեն իսկ կատարված աշխատանքները եւ ներկա վիճակը, քննարկել առաջիկա աշխատանքների հետ կապված:

● Հուլիսի 14-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ինչ տարբերություն, թե ում հետ» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:



ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք հնարավոր է գրանցման/վերագրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել ՀՀ իրավաբանական անձանց ոչեսական ռեգիստրի գործակալություն՝ առանց գործակալություն ֆիզիկապես ներկայանալու:
Արամ Ստեփանյան (38 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման հավելված 2-ի համաձայն՝ հասարակական կազմակերպությունների պետական գրանցման, փոփոխությունների պետական գրանցման կամ պետական գրանցման մերժման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորն իրականացնում է դիմողի նույնականացման, պետական տուրքի գանձման, փաստաթղթերի ընդունման, փոխադրման եւ հանձնման գործառույթներ:

Իրավաբանների հայկական ասոցիացիա

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Վերոնշյալ որոշման հավելված 1-ով սահմանված է օպերատորների ցանկը, որոնք են՝

1. «ՀԱՅՓՈՍ» փակ բաժնետիրական ընկերություն
2. «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
3. «ԱՍԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
4. «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
5. «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն
6. «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
7. «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
8. Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե
9. «ՄՈՒԻ ԴՐԱՄ» փակ բաժնետիրական ընկերություն
10. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն:

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Հետևաբար փաստաթղթերը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն հնարավոր է ներկայացնել վերոնշյալ ընկերությունների գրասենյակների միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որտե՞ղ կարելի է ստանալ մասնագիտական կողմնորոշման ծառայություններ:
Սարգիս Առաքելյան (51 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե աշակերտ եք, մասնագիտական կողմնորոշման ծառայություններ կարող եք ստանալ դպրոցում (հանրակրթական ուսումնական հաստատությունում), իսկ եթե ուսանող եք, նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական (Ն(Ա)ՄԿ) կամ բարձրագույն ուսումնական հաստատության կարիերայի կենտրոնում:

Միասնական սոցիալական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Եթե աշխատանքի հարցում դեռևս հստակ կողմնորոշում չունեք կամ վերամասնագիտացման, վերաորակավորման, աշխատաշուկայի արագ փոփոխվող պայմաններին հարմարվելու կարիք ունեք, մասնագիտական կողմնորոշման ծառայություններ կարող եք ստանալ միասնական սոցիալական ծառայության զբաղվածության կենտրոններում:

ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Ինչպես նշվել էր այս տարի «Ոսկե Ծիրան» կինոփառատոնի շրջանակում կարմիր գորգեր չեն լինի, դրանք կփոխարինվեն հայկական զարդանախշերով գորգերով: Ահա բացման օրը, կարծես թե, այցելուներին հաճելիորեն զարմացրել են հայկական զարդանախշերով գորգերը:

ԲԱԺՆԱՌԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
 Բաժանորդագրվելու
 համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
 հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
 հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
 հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+ 7 + 12 +25 + 29	Արարատ	+19 + 21 +34 + 36
Կոտայքի լեռներ	+ 8 + 10 +24 + 27	Արմավիր	+18 + 20 +34 + 36
Կոտայքի նախալեռներ	+ 19 + 21 +30 + 33	Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Գեղարքունիք	+ 7 + 11 +24 + 28	Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 19 +33 + 35
Լոռի	+ 9 + 14 +25 + 28	Սյունիքի հովիտներ	+18 + 21 +31 + 34
Տավուշ	+ 14 + 19 +29 + 33	Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16 +25 + 28
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9 +23 + 27	ԼՂՀ	+ 12 + 15 +24 + 26
Արագածոտնի նախալեռներ	+ 16 + 20 +29 + 33	Երեւան	+ 22 + 24 + 32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
 տրված է 24.11.2010
 Ստորագրված է տպագրության 8.7.2024

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
 խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: